

ԿԱՐԾԻՔ
ՊԱԾՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍԽ

Էմմա Աշոտի Թափառյանի «Հարկային քաղաքականության ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը

Էմմա Աշոտի Թափառյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա հարկային քաղաքականության ազդեցության գնահատանը և մեթոդաբանական կատարելագործման արդյունավետ ուղիների առաջարկմանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկային քաղաքականությունը հանդիսանում է տնտեսության պետական կարգավորման առանցքային գործիքներից մեկը, որի արդյունավետությունից ուղղակիորեն կախված են պետական բյուջեի եկամուտները, համախառն ներքին արդյունքի աճը, զբաղվածության մակարդակը և քաղաքացիների բարեկեցությունը: Հայաստանի Հանրապետության համար, որը կանգնած է ներքին զարգացման էական մարտահրավերների առջև, հարկային քաղաքականության դերը տնտեսական աճի խթանման գործում չափազանց կարևոր է: Աշխատանքում իրականացված վերլուծությունը, որը գնահատում է հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապը, ունի ինչպես տեսական, այնպես էլ ՀՀ հարկային քաղաքականության ազդեցության գնահատման մեթոդաբանության նոր լուծումների համատեքստում կարևոր գործնական նշանակություն:

Հարկային քաղաքականության և տնտեսական աճի միջև կապը շարունակում է մնալ ակադեմիական բանավեճերի առարկա, հատկապես՝ փոխակերպվող տնտեսություն ունեցող երկրների, այդ թվում՝ հետխորհրդային պետությունների համար: Այս համատեքստում, ատենախոսությունը կարևորվում է հարկերի հիմնական

գործառույթների՝ ֆիսկալ, կարգավորիչ և խթանիչ, համակարգված դիտարկմամբ: Ատենախոսը հիմնավորված կերպով ընդգծում է այս գործառույթների միջև առկա հակասությունները, մասնավորապես այն իրավիճակը, երբ բյուջետային մուտքերի ապահովմանն ուղղված ֆիսկալ գործառույթի գերակայությունը կարող է խոչընդոտել տնտեսական աճին ուղղված խթանիչ գործառույթի իրականացմանը: Բերված փաստարկներով ատենախոսը հիմնավորել է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է գնահատել ՀՀ հարկային քաղաքականության ազդեցությունը երկրի տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վրա և բացահայտել դրա զարգացման ռիսկերն ու հնարավորությունները: Այս նպատակին հասնելու համար ատենախոսի կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Հետազոտել հարկային համակարգի դերը, գործառույթները և բովանդակությունը,
- Վերլուծել հարկային համակարգի և տնտեսական աճը բնութագրող առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունները,
- Համակարգել հարկերի գործառույթները փոխակերպվող տնտեսություն ունեցող երկրների համար,
- Վերլուծել ՀՀ հարկային մուտքերի դինամիկան և ժամանակակից միտումները,
- Ուսումնասիրել ՀՀ հարկային քաղաքականության հնարավոր սցենարները,
- Ելնելով հարկային համակարգի տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունից՝ ձևավորել հարկային մուտքերի վերին և ստորին սահմանները,
- Ներկայացնել հարկային քարեփոխումների առաջնահերթ խնդիրները և դրանց լուծման ուղիները,
- Գնահատել հարկային եկամուտների և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը << հարկային համակարգն է, իսկ առարկան՝ հարկային քաղաքականության արդյունավետ ազդեցության գնահատումը մակրոտնտեսական ցուցանիշների վրա, և դրան առընչվող հիմնախնդիրները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

• Գնահատվել է հարկման մակարդակների միջակայքը: Բացահայտվել է, որ հարկերի խթանիչ գործառույթը ուղեցույց է միջակայքի վերին սահմանի համար, իսկ ֆիսկալ և կարգավորիչ գործառույթները ուղեցույց են հարկման մակարդակի միջակայքի ստորին սահմանի համար:

• Հիմնավորվել է, որ հարկային քաղաքականությունը, ելնելով հարկերի խթանիչ գործառույթից, պետք է նպաստի տնտեսական աճը բնութագրող 4 փոխսկապակցված նպատակային ցուցանիշների՝ ՀՆԱ-ի օպտիմալ աճի, առևտրային հաշվեկշռի բարելավմանը, զբաղվածության աճին և գների կայունության ապահովմանը:

• Կոռեյացիոն և էկոնոմետրիկ գնահատման միջոցով մշակվել է մոդել և բացահայտվել է հարկային եկամուտների ուժեղ փոխսկապակցվածություն միջին աշխատավարձի հետ, և չափավոր կախվածություն՝ արտահանման և տնտեսական ակտիվության ցուցանիշի հետ:

• Հումքի արտահանման մաքսատուրքի սահմանման համար մշակվել է մոտեցում և առաջարկվել է որպես ուղեցույց կիրառել բանաձև՝ ծեավորված տվյալ արտադրանքի գնի մեծագույն և նվազագույն արժեքների վրա:

Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և այլ մարմինների կողմից՝ հարկային քաղաքականության բարելավման, տնտեսության զարգացման և հարկային բերի ճշգրտման նպատակով:

Իրականացված հետազոտությունների արդյունքում տրվել են եզրակացություններ և առաջարկություններ Հայաստանում հարկային քաղաքականության արդիականացման, ինչպես նաև դրա արդյունավետության բարձրացման համար՝ Հայաստանում ֆիսկալ, կարգավորիչ և խթանիչ գործառույթների համակարգված իրականացման համար: Դրանք կարող են նպաստել առանցքային մակրոցուցանիշների էական բարելավմանը:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածությունում ներկայացված են թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Առաջին՝ «Հարկերի դերի և գործառույթների համակարգումը» գլխում, հեղինակը համակարգում է հարկերի ֆիսկալ, կարգավորիչ և խթանիչ գործառույթները, վերլուծում դրանց փոխկապվածությունը և իրականացնում է ԵԱՏՄ երկրների ու Վրաստանի հարկային համակարգերի համեմատական վերլուծություն:

Ատենախոսն առաջ է քաշել այն հիպոթեզը, ըստ որի հարկերի նվազագույն դրույքաչափերի ուղեցուցը պետության հիմնական խնդիրների կատարումն է՝ անվտանգության ապահովում, պետական ապարատի գործունեության արդյունավետ իրականացում, առողջապահության, կրթության, գիտության ծախսերի պատշաճ մակարդակի ապահովում:

Երկրորդ՝ «Հարկային համակարգի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունը» գլխում, համակարգվում են հարկային քաղաքականության տեսանկյունից կարևոր մակրոտնտեսական ցուցանիշները՝ հիմնվելով «Գերմանական

քառակուսու» սկզբունքների վրա, և իրականացվում է SWOT վերլուծություն՝ գնահատելու ՀՀ հարկային բարեփոխումների հնարավոր ազդեցությունը:

Ըստ ատենախոսի տեսակետի՝ հարկային բարեփոխումները, հարկերի խթանից գործառույթի առումով, առաջին հերթին պետք է ուղղված լինեն պատրաստի արտադրանքի արտահանման էական աճին և արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացմանը՝ նվազեցնելով կախվածությունը առանձին ապրանքախմբերից: Այսպիսով, հարկերի խթանից գործառույթը ստանում է առաջնահերթ դեր պատրաստի արտադրանքի արտահանման և դրա հետ անմիջապես փոխկապակցված գնաճի նվազման առումով:

Երրորդ՝ «Հարկային եկամուտների ազդեցությունը տնտեսական աճի վրա» գլխում, վերլուծվում է ՀՀ հարկային եկամուտների դինամիկան 2018-2024 թթ. համար, իրականացվում է հարկային եկամուտների և մակրոտնտեսական ցուցանիշների (ՏԱՅ, միջին աշխատավարձ, արտահանում, ՍԳԻ) միջև կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն և առաջարկվում է հարկային քաղաքականության սցենարային գնահատում, մասնավորապես՝ հումքի արտահանման մաքսատուրքի սահմանման մոտեցում:

Կատարված գնահատումների արդյունքում ատենախոսը հանգել է այն դրվորոշմանը, որ «հարկեր-ՀՆԱ» հարաբերակցության վրա ֆիսկալ առումով դրական է անդրադառնում հումքի վրա արտահանման մաքսատուրքը: Դրա հետ մեկտեղ այդ քայլը կնպաստի պատրաստի արտադրանքի աճին երկրում, փաստացի այս քայլը նպաստավոր է և՛ ֆիսկալ, և՛ պատրաստի արտադրանքի արտահանման տեսանկյունից՝ խթանից ու կարգավորիչ գործառույթների առումով: Տվյալ դեպքում արտահանման մաքսատուրքը պետք է զուգորդվի սահմանային գների կիրառումով:

Եզրակացություն բաժնում ամփոփված են ատենախոսության հիմնական արդյունքներն ու առաջարկությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները:

1. Ատենախոսության 1.2 ենթահարցում հեղինակը քննարկում է Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկի հարթ համակարգին անցումը և նշում, որ այն հակասում է արդարության սկզբունքին, ինչը սակայն արդարացի է համարվում

կոռուպցիայի և ստվերային տնտեսության բարձր մակարդակի պայմաններում: Թեև փաստարկը տրամաբանական է կարճաժամկետ հարկային վարչարության տեսանկյունից, սակայն աշխատանքում բացակայում է այս փոխգիշման երկարաժամկետ սոցիալ-տնտեսական հետևանքների խորքային վերլուծությունը: Յանկալի կյաներ տեսնել եկամտային անհավասարության վրա եկամտային հարկի հարթ համակարգի ազդեցության մոդելավորում կամ սցենարային գնահատում:

2. Աշխատանքի 1.3 ենթահարցում իրականացվել է « հարկային դրույքաչափերի համեմատական վերլուծություն ԵԱՏՄ երկրների և Վրաստանի հետ՝ եզրակացնելով, որ Հայաստանը զիջում է մրցունակության գործոնով: Սակայն, վերլուծությունը հիմնականում կենտրոնանում է անվանական դրույքաչափերի վրա՝ առանց համապարփակ դիտարկելու այդ հարկերով ֆինանսավորվող պետական ծառայությունների որակն ու ծավալը: Ավելի ամբողջական պատկեր ստանալու համար նպատակահարմար կյաներ հաշվի առնել նաև «հարկային վերադարձը»՝ հանրային բարիքների (ենթակառուցվածքներ, կրթություն, առողջապահություն) տեսքով, ինչը ևս ազդում է գործարար միջավայրի գրավչության վրա:

3. Ատենախոսության 3.3 ենթահարցում ատենախոսի կողմից առաջարկվել է հումքի (մասնավորապես՝ պղնձի խտանյութի) արտահանման մաքսատուրքի սահմանման բանաձև, որը հիմնված է վերջին 10 տարվա ընթացքում գրանցված նվազագույն և առավելագույն գների վրա: Թեև մոտեցումը գործնականում պարզ է և կիրառելի, այն ունի ստատիկ բնույթ: Յանկալի կյաներ, որ հեղինակը քննարկեր նաև ավելի դինամիկ մոդելավորման հնարավորությունը, որը կարող է հաշվի առնել նաև համաշխարհային պահանջարկի տատանումները, արտադրության ինքնարժեքի փոփոխությունները կամ այլ մակրոտնտեսական ցուցիչները:

4. Հետազոտության շրջանակներում ատենախոսն առաջ է քաշել այն տեսակետը, ըստ «...որի ելնելով հարկերի սոցիալական դերից և կարգավորիչ գործառույթից, առաջնահերթ է ապահովել առավելագույն զբաղվածություն հատկապես սահմանամերձ շրջաններում: Հաշվի առնելով դրանց ծավալը պետական բյուջեում՝ հարկային արտոնությունների կիրառումը տվյալ շրջաններում որոշիչ դեր չունի պետական բյուջեի ձևավորման տեսանկյունից: Այստեղ նպատակահարմար է կիրառել զբաղվածության աճի համար եկամտային հարկի, ինչպես նաև շահութահարկի էապես

ավելի ցածր դրույքաչափ... »: Կարծում ենք, այս տեսակետը բանավեճային է, և հատկապես եկամտային հարկի, ինչպես նաև շահութահարկի էապես ավելի ցածր դրույքաչափերի մասով առաջարկը խորը հիմնավորման կարիք ուներ:

5. Աշխատանքի 3.2 ենթահարցում ներկայացված էկոնոմետրիկ մոդելավորումը ցույց է տալիս ուժեղ կապ հարկային եկամուտների, միջին աշխատավարձի և տնտեսական ակտիվության ցուցանիշի միջև: Սակայն, աշխատանքում կարելի էր ավելի խորը անդրադառնալ այս փոփոխականների միջև հնարավոր էնդոգենության խնդրին: Այս հարցի քննարկումը կամ պատճառահետևանքային կապերի ստուգմանն ուղղված լրացուցիչ մեթոդների կիրառումը կբարձրացներ վերլուծության արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոս Է.Ա.Թավառյանը կատարել է ուշագրավ, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի մոտեցումներ պարունակող հետազոտություն: Այն ինքնուրույն կատարված հետազոտություն է, որտեղ դրված և լրացված են է << մակրտոտնտեսական ցուցանիշների վրա հարկային քաղաքականության ազդեցության գնահատան և մեթոդաբանական կատարելագործման տեսական ու գործնական հեղինակի կողմից տարբերակված մի շարք կարևոր խնդիրներ:

Ատենախոսությունում կիրառված տեսական ու գործնական մոտեցումները և ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները գիտականորեն հիմնավորված և ընդունելի են: <ետազոտության արդյունքում առաջադրված առաջարկությունների կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ արտաքին առևտրի ծավալների աճի վրա:

Սեղմագիրը կազմված է << ԲԿԳԿ-ի պահանջներով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական 7 հոդվածներում, որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները ստացել են իրենց լրաբանումը:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Էմմա Աշոտի Թավառյանի «Հարկային քաղաքականության ազդեցությունը << մակրոտնտեսական ցուցանիշների

վրա» թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և «ՀԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Էմմա Աշոտի Թավառյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ch. B. Soree

Ա.Վ. Մաթենայան

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Վ. Մաթևոսյանի ստորագրությունը
հաստատում եմ

ՀՊՏՀ գիտական բարտուղար՝

Ն.Հ. Դարբինյան

22 Հոկտեմբեր 2025 թ.